ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԲԸԱՀՇՁԲ-7-9

ք. Երևան **05.09.2016թ.**

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս պաշտպանության նախարարի տեղակալ-ՆՏԱ դեպարտամենտի պետ Մ. Հակոբյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Պատվիրատու», մի կողմից «Մովսեսյան» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Մ.Պողոսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Կատարող», մյուս կողմից, երկուսը միասին՝ կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1,2 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր և Գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1,2 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր և Գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածներում նշված Տեխնիկական բնութագիր և Գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր և Գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 4) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հինգօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցած Ծառայության յուրաքանչյուր միավորի գինը ներկայացված է պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 2 հավելվածում: Պայմանագրի ընդհանուր գումարը կազմում է 2768280(երկու միլիոն յոթ հարյուր վաթսունութ հազար երկու հարյուր ութսուն) ՀՀ դրամ : Պայմանագրի գինը ներառում է տվյալ գնման պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

4.2 Գնորդն իրեն մատուցված Ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N3-ով, նախատեսված ամսում,/ եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումը իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցներ նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 10.12.2016թ:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է 9 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N2, N3, N4 և N4.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10.Սույն պայմանագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ Թիկունքի վարչությունը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Մովսեսյան» ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ք. Երևան, Զաքյան 3, բն 29
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 1570023726030100
ՀՎՀՀ 00867415	ՀՎՀՀ 02648041
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-	Տնօրենի
ՆՏԱ դեպարտամենտի պետ	
Մ. ՀԱԿՈԲՅԱՆ	Մ.ՊՈՂՈՍՅԱՆ

Հավելված 1
N ԲԸԱՀԾՁԲ-7-9 ծածկագրով
գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Ծառայության անվանումը	Տեխնիկական բնութագիր		
ներկայացուցչական, արարողակարգային ծառայություններ	Կոկա-կոլա	2 004 հատ	Գազավորված զովացուցիչ ըմպելիք <<Կոկա-կոլա>> տեսակի կամ համարժեք՝ 0.5լ պլաստմասե շշերով: Պարունակությունը՝ ջուր, շաքար, ածխածնի երկօքսիդ E290, բնական գունանյութ (շաքարային կոլեր IV E150), թթվանյութային կարգավորիչ (ֆոսֆորաթթու E338), բուսական թուրմեր, կոֆեին: Սննդային արժեքը 100մլ-ի մեջ՝ կալորիականություն 42.0կկալ, ածխաջրեր 10.6գ, այդ թվում շաքարը 10.6գ, սպիտակուցներ 0գ, ճարպեր 0գ, նատրիում 0գ: Պոլիէթիլենային փաթեթավորմամբ, մեկ փաթեթի մեջ 12 շիշ: Պիտանելիության ժամկետը մատակարարման օրվանից, ոչ պակաս քան 20%, պիտանելիության ժամկետը արտադրման օրվանից ոչ պակաս 4 ամիս:
	Ֆանտա	2 004 հատ	Գազավորված զովացուցիչ ըմպելիք <<Ֆանտա>> տեսակի կամ համարժեք՝ 0.5լ պլաստմասե շշերով: Պարունակությունը՝ ջուր, շաքար, ածխածնի երկօքսիդ, թթվանյութեր (կիտրոնաթթու E320, նատրիումի ցիտրատ E331), կայունացնող կոմպոնենտներ (գումակացիա E414, գլիցերինի և խեժաթթուների եթերներ E445), պահածոյացնող նյութ (կալիումի սորբատ E202), բնական անուշահամ նյութեր, հակաթթվեցնող (ասկորբինաթթու E300), գունանյութ (բետա-կարոտին E160a): Սննդային արժեքը 100մլ-ի մեջ՝ կալորիականություն 50կկալ, ածխաջրեր 12.2գ, այդ թվում շաքարը 12.2գ, սպիտակուցներ 0գ, ճարպեր 0գ, նատրիում 0գ: Պիտանելիության ժամկետը մատակարարման օրվանից, ոչ պակաս քան 20%, պիտանելիության ժամկետը արտադրման օրվանից ոչ պակաս 4 ամիս:
	Սփրայտ	2 010 հատ	Գազավորված զովացուցիչ ըմպելիք <<Սփրայտ>> տեսակի կամ համարժեք՝ 0.5լ պլաստմասե շշերով: Պարունակությունը՝ ջուր, շաքար, ածխածնի երկօքսիդ E290, թթվանյութեր (կիտրոնաթթու E330, նատրիումի ցիտրատ E331), պահածոյացնող նյութեր (նատրիումի բենզոատ E211), անուշահամ նյութեր: Սննդային արժեքը 100մլ-ի մեջ՝ կալորիականություն 42.0կկալ, ածխաջրեր 10.2գ, այդ թվում շաքարը 10.2գ, սպիտակուցներ 0գ, ճարպեր 0գ, նատրիում 0գ: Պոլիէթիլենային փաթեթավորմամբ, մեկ փաթեթի մեջ 12 շիշ: Պիտանելիության ժամկետը մատակարարման օրվանից, ոչ պակաս քան 20%, պիտանելիության ժամկետը արտադրման օրվանից ոչ պակաս 4 ամիս:
	Սնիկերս	2 004 հատ	Շոկոլադե բատոնչիկ բոված գետնանուշով, կարամելով և նուգայով՝ պատված կաթնային շոկոլադով. Բաղադրություն. կարամել, գետնանուշ, գլյուկոզի օշարակ (եգիպտացորենի, ցորենի), արմավենու ռաֆինացված, հոտազերծված բուսական յուղ, յուղազերված չոր կաթ, աղ, անուշաբույր նյութ (վանիլին), կաթնային շոկոլադ (կակաոյի ընդհանուր չոր մնացորդ՝ 27%-ից ոչ պակաս, կաթնային չոր մնացորդ՝ 20%-ից ոչ պակաս), շաքար, կակաոյի յուղ, մանրած կակաո, լակտոզ, անխառն չոր կաթ, կաթնային չոր շիճուկ, կաթնային յուղ, էմուլսարար (սոյայի լեցիտին), անուշաբույր նյութ (վանիլին), նուգա, գլյուկոզի օշարակ, (եգիպտացորենի, ցորենի), շաքար, գետնանուշ, ռաֆինացված, հոտազերծված արմավենու բուսական յուղ, աղ, ձվի չոր սպիտակուց: Կարող է պարունակել անհնշան քանակությամբ կաղին, նուշ, քեշյու: Սննդային արժեքի միջին արժեքները (100գ), սպիտակուցներ՝ 7.6գ, ճարպեր՝ 25.8գ, ածխաջրեր՝ 58.3գ: Էներգետիկ արժեքը (100գ), 496 կկալ/2077կՋ:

	Մարս	2 004 հատ	Շոկոլադե բատոն նուգայով և կարամելով՝ պատված կաթնային շոկոլադով. Բաղադրություն. Կաթնային շոկոլադ (կակաոյի ընդհանուր չոր մնացորդ՝ 26%-ից ոչ պակաս, կաթնային չոր մնացորդ՝ 23%-ից ոչ պակաս), շաքար, կակաոյի յուղ, մանրած կակաո, յուղազերծված չոր կաթ, լակտոզ, անխառն չոր կաթ, կաթնային յուղ, կաթնային չոր շիճուկ, էմուլսար (սոյայի լեցիտին), անուշաբույր նյութ (վանիլին), նուգա, շաքար, գլյուկոզի օշարակ, (եգիպտացորենի, ցորենի), արմավենու ռաֆինացված, հոտազերծված բուսական յուղ, կակաոյի փոշի, գարու ածիկի լուծամզուք, յուղազերծված չոր կաթ, ձվի չոր սպիտակուց, աղ: Կարամել, գլյուկոզի օշարակ, (եգիպտացորենի, ցորենի), շաքար, յուղազերված չոր կաթ, արմավենու ռաֆինացված, հոտազերծված բուսական յուղ, յուղազերծված չոր կաթ, աղ: Պարունակվում է գլյուտեն: Կարող է պարունակել աննշան քանակությամբ գետնանուշ, կաղին, նուշ: Չհագեցած ճարպաթթուների տրանսիզոմերը շոկոլադի մեջ՝ 1%-ից ոչ ավել. Սննդային արժեքի միջին արժեքները (100գ), սպիտակուցներ՝ 3.8գ, ճարպեր՝ 17.1գ, ածխաջրեր՝ 70գ: Էներգետիկ արժեքը (100գ), 452 կկալ/1892կՋ:
	Թվիքս	2 010 հատ	Փխրուն թխվածքաբլիթ կարամելով՝ պատված կաթնային շոկոլադով: Բաղադրություն. Կաթնային շոկոլադ (կակաոյի ընդհանուր չոր մնացորդ՝ 26%-ից ոչ պակաս, կաթնային չոր մնացորդ՝ 20%-ից ոչ պակաս), շաքար, կակաոյի յուղ, մանրած կակաո, լակտոզ, անխառն չոր կաթ, կաթնային չոր շիճուկ, կաթնային յուղ, էմուլսար (սոյայի լեցիտին), անուշաբույր նյութ (վանիլին), կարամել, գլյուկոզի օշարակ (եգիպտացորենի, ցորենի), շաքար, արմավենու ռաֆինացված հոտազերծված բուսական յուղ, յուղազերծված չոր կաթ, աղ, անուշաբույր նյութ (վանիլին). Սննդային արժեքի միջին արժեքները (100գ), սպիտակուցներ՝ 3.9գ, ճարպեր՝ 24.3գ, ածխաջրեր՝ 65.2գ: Էներգետիկ արժեքը (100գ), 497 կկալ/2082կՋ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-
ՆՏԱ դեպարտամենտի պետ

Մ.ՀԱԿՈԲՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Մովսեսյան» ՍՊԸ
ք. Երևան, Զաքյան 3, բն 29
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570023726030100
ՀՎՀՀ 02648041
Տնօրենի

Մ.ՊՈՂՈՍՅԱՆ

Հավելված 2
N ԲԸԱՀԾՁԲ-7-9 ծածկագրով
գնման պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Ծառայության անվանումը	Չափման միավորը	Քանակ	1 անձի համար նախատեսված մթերքի արժեքը /դրամ/	Ընդհանուր գումարը /դրամ/	Ծառայության մատուցման ժամկետ
1	Ներկայացուցչական, արարողակարգային ծառայություններ	անձ	3009	920	2768280	Մինչև 10.09.2016թ.
Ընդհամենը	2768280(երկու միլիոն յոթ հարյուր վաթսունութ հազար երկու հարյուր ութսուն) ՀՀ դրամ					

Մատուցման վայրը Ծառայության կատարումը մինչև ս.թ. սեպտեմբերի 10-ը, մատուցվող ծառայության վայրը՝ ՀՀ ՊՆ կենտրոնական պարենային բազա:

Հավելված 3
N ԲԸԱՀԾՁԲ-7-9 ծածկագրով
գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

N	Ծառայության անվանումը	CPV դասակարգում	Նախատեսվում է հրավերատիրոջ 2016թ. ըստ ամիսների հետևյալ հոսքն			
			սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր-ոչ ուշ քան 10.12.2016թ.
1	Ներկայացուցչական, արարողակարգային ծառայություններ	98391160/2/1/1	2768280	2768280	2768280	2768280

Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-
ՆՏԱ դեպարտամենտի պետ

Մ.ՀԱԿՈԲՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Մովսեսյան» ՍՊԸ
Տնօրեն

Մ.ՊՈՂՈՍՅԱՆ

Հավելված 4
N ԲԸԱՀԾՁԲ-7-9 ծածկագրով
գնման պայմանագրի

Պատվիրատու

_____

_____

գտնվելու վայրը _____

հհ_____

_____

հվհհ_____

Պայմանագրի կողմ

_____

_____

գտնվելու վայրը _____

հհ _____

_____

հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 4.1
N ԲԸԱՀՇՁԲ-7-9 ծածկագրով
գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ------- -ին կնքված N ----------
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն